Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի, ռուսաց լեզվի (7,5 դասաժամ), ֆրանսերենի (4,5 դասաժամ), աշխարհագրության (3 դասաժամ), ֆիզկուլտուրայի (4 դասաժամ), ինֆորմատիկայի (1,5 դասաժամ), ֆիզիկայի (3,5 դասաժամ), մաթեմատիկայի (6,5 դասաժամ), զինղեկի, ՔՊ (05,0,3 դրույք), ուսուցչի օգնականի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման եւ հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են դեկտեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր ՝ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թվականի դեկտեմբերի 22-ին՝ ժամը 15:00-ին,** ՀՀ Սյունիքի մարզի Բարձրավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գորիս համայնք, գ. Բարձրավան, Բարձրավանի միջնակարգ դպրոց:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 182465, հեռախոսահամարով: